

Կ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ «ՀՈՇՈՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԸ»

Ռ. Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կարեն Միքայելյանը (1883—1941) հայ մտավորականության նշանավոր գեղեցիկ է և Արձակագիր, թարգմանիչ, գրական և սկետական-հասարակական գործիչ, որը, ապրելով հիմնականում Մոսկվայում, ամեն կերպ ձգտում էր օգտակար լինել հայ ժողովրդին, հայ մշակույթին, Հայաստանին:

Կարեն Միքայելյանը գրական-հասարակական ասպարեզ է իջել XIX դարի վերջին—XX դարի սկզբին: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ արևելահայ գրականության մեջ նկատվում է աշխուժություն, հայտնվում են նոր անուններ, հետաքրքիր ստեղծագործություններ, առաջադեմ հասարակական հոսանքներ: Հանդես է գալիս նաև քննադատների մի սերունդ, որն իր առջև խնդիր էր դրել «նորովի» մեկնաբանել դասական և ժամանակակից գեղարվեստի հարցերը: Նրանց մոտ լիարժեք էր պայմանավորված էր դարասկզբին գրական նոր հոսանքների ձևավորումով ու գաղափարական այն նոր միտումներով, որ հեղափոխական դեպքերի ազդեցության տակ լայնորեն տարածվում էին նաև հայ իրականության մեջ¹:

1909 թ. Մոսկվայում նա մի խումբ հայ մտավորականների հետ ձևակերպում է «Գարուն» գրական-գեղարվեստական տարեգրքի (ալմանախի) լույս ընծայում: Այս շնորհալի, բայց և բազմաշարժար գործում Կ. Միքայելյանի կողքին էին խմբագրության մյուս անդամները՝ Ալ. Մատուրյանը, Ալ. Ռուբենին, Ալ. Մյասնիկյանը, Կ. Կուսկյանը, Յ. Խանդաղյանը, Վ. Տերյանը... Առաջին գիրքը, որ լույս տեսավ 1910 թ. գարնանը, անունների մի ծաղկափունջ ներկայացրեց հայ հասարակությանը՝ Ալ. Խաչատրյան, Ալ. Մատուրյան, Վ. Տերյան, Հ. Հակոբյան, Շ. Կուրդիյան, Լ. Շանթ, Դ. Դևիդյան, Վրթ. Փափազյան և ուրիշներ:

Հրապարակվեցին հանդեսի հարուստ բովանդակություն ունեցող նաև երկրորդ և երրորդ համարները: Սակայն հասարակական-քաղաքական և ֆինանսական ծանր վիճակի հետևանքով հանդեսի հրատարակությունը դադարում է: Այսպիսով, «Գարունը» ունեցավ կարճ կյանք (ընդամենը 3 գիրք, 1910—1912 թթ.), բայց շնայած դրան նա հանդիսացավ նոր թարմ մտքերի հզոր իմաստի:

Միքայելյանը շարունակեց իր ստեղծագործական գործունեությունը: Նա թղթակցում էր հայ կովկասյան և ուսաստանյան սյարբերականներին: Աչքի ընկավ Միքայելյանի երկերի ժողովածուի երկրորդ գիրքը՝ «Զմռան Լրեկո» վերնագրով (1912, թիֆլիս—Մոսկվա): Հայ մամուլը, գրաքննադատները, գրողները և ընկերները արձագանքեցին նոր գրքին գրախոսականներով, ջերմ նամակներով: Այսպես, օրինակ, հայտնի գրականագետ Յ. Խանդաղյանը իր նամակներից մեկում նշում էր, որ Կ. Միքայելյանի «Երկնային ստիկան» «չափազանց լավ տպավորություն է թողնում», նկատվում է «Զեփոկյան կարճ, քախոս ձևը»:

Մասնագետների և ընթերցողների կարծիքները, իհարկե, ողևորում են գրողին: Լույս աշխարհ են գալիս նոր սպասվածքներ, որոնց մի մասը տպագրվում է մամուլում (հիմնականում՝ «Մշակում»), մյուսը՝ առաջիմ մնում է, ինչպես ասում են, «գրասեղանի դարակում»:

Հայ ժողովրդի ողբերգությունը՝ 1915 թ. եղեռնը ցնցեց նաև Կ. Միքայելյանին: Զգտելով օղբերգ իր ժողովրդին, նա թողնում է բոլոր գործերը և մեկնում հայրենիք՝ Հայաստան: Նստատակ էր՝ այցելել այն վայրերը, ուր ցաք ու ցրիվ ընկած էին հայության մի մեծ մասի խղճով բեկորները՝ ընչազուրկ և հյուսված... «Ինձ այդ վայրերը մղողը,—գրում է Կ. Միքայելյանը,—մի կողմից քաղաքացիական պարտքի զգացմունքն էր՝ մի կերպ օգտակար լինել հանդես այն ծով կարիքների, որ բաժն ընկան իմ ցեղին, մյուս կողմից գրական մարդու՝ գի-

¹ է. Գ. Զրբաշյան. Առաջաբան.—Պոդոս Մակինցյան. Դիմագծեր, գրական-քննադատական ուսումնասիրություններ և հոդվածներ. Երևան, 1980, էջ 3:

տելու և ճանաչելու ներքին պահանջը²։ Հայրենասեր զորողը 1916 թ. շրջում է որբանոցները, որոնք նդռնից հետո սփռված էին ամբողջ Անդրկովկասով մեկ՝ լինում է Երևանում, Ալեք-սանդրապոլում, Էջմիածնում, Աշտարակում, Սշականում, ինչպես նաև Իֆիֆլիսում և Բաքվում։

Միքայելյանը 1916 թ. դեկտեմբերի 6-ի նամակում գրում է Երևանից Թիֆլիս՝ Հովհ. Խումանյանին. «...Շրջում էի տեղիս որբանոցները։ Սրկու նպատակ ունեի՝ նախ՝ զրի առնել տաճկահայերի վերջին ողբերգությունն ըստ մանուկների պատմածների և դրանց հիման վրա գրել զեղարվեստական երկեր, չգուրս դալով նյութի սահմաններից։ Սրկորոգ. հավաքել երե-խաների՝ ինձ համար միանգամայն անսպասելի կերպով երևան եկած զրական արտահայ-տությունները։ Այժմ ձեռքիս տակ ունիմ մի մեծ զրականություն։ Այդտեղից ընտրել եմ բա-նաստեղծական գրվածքներ, որոնց մեջ կան հաճախ շատ հաջող կտորներ։ Այդ կտորները իրենց մեջ արտացոլում են վերջին դեպքերը։ Շատ հետաքրքրական և սրտառու է, թե ինչ-պես է երգում երկխան իր վիշտն ու ուրախությունը, իր կրած տանջանքները, իր տեսած ար-տասուքները...»³։

Այսպես ծնվում է «Հողտուված Հայաստան» պատմվածքների շաբթը, որը տպագրվում է 1916—1917 թթ. «Գործ» (Խաբու) լրագրի մի քանի համարներում (№ 1—4)։ Շաբթի առա-ջարանում, որը կոչվում է «Մանուկ Հայաստան», Կ. Միքայելյանը գրում է. «...Իմ մեջ առա-ջացավ մի անդուստլ ցանկություն՝ հաղորդակից լինելու տաճկահայի ողբերգությանը, երբ նրա երկիրը ավերվեց, ընտանիքը քայքայվեց ու պղծվեց, հարազատները մարտիրոսացան և նա ընկավ տառապանքի ու դեղերումների աշխարհում։ Իրա համար հարկավոր էր, որ տեսնեի նրա աչքով, լսեի նրա ականջով և զգայի նրա սրտով, չկորցնելով միևնույն ժամանակ վիպագրողը անաչառությունն ու արձանագրողի սառնասրտությունը»⁴։

Երկար որոնումներից հետո Միքայելյանը համոզվում է, որ իր այդ պահանջներին ամե-նից շատ բավարարում են հենց երեխաները, քանի որ «մեծերը չէին կարողանում հանգիստ և որ զլխավորն է՝ առանց պափոսի պատմել իրենց զլխին եկածը, ինչպես այդ անում էին երեխաները» և նրանց պատմությունները «սովորաբար աղատ չէին լինում լրագրական կան-խակալ կարծիքներից, կուսակցական միտումներից, անգամ ազգային նեղսրտությունից»⁵։ Առաջարկանում զորողը ընդգծում է. «Տաճկա-Հայաստանում կատարված դժոխային ոճիրները, անլուր սարսափները և տաճկահայի կրած դերմարդկային տառապանքը պիտի խոսեցնեն անգամ քարերին, բայց իսկույն չխոսեցին... թող ուրեմն թոթովի անմեղ մանկանց անպա-ճույճ լիպուն և պատմի մեզ մեր բնավեր հայրենիքի ճշգրիտ պատմությունը»⁶։

Կ. Միքայելյանը ընտրում է տարբեր շրջանների և կոտորածի տարբեր վայրերի ակա-նատես մանուկներին՝ նրանց, որոնք լավ հիշողություն ունեին և սահուն լեզու, և պատմել է տալիս ու տեղի ու տեղը զրի առնում այն ամենը, ինչ նրանք տեսել, լսել և կրել էին։ Գրողը միայն աշխատում էր, իր իսկ խոսքերով, որ նրանք դուրս չգան նյութի սահմաններից։ Հարց ու փորձ էին արվել չորսից մինչև տասնվեց տարեկան որբերը։ Լսածները Միքայել-յանը սղագրում է «ամենայն հարազատությամբ», հաճախ «ստենոգրաֆիական իսկություններ», ունենալով միշտ իր կողքին, իրեն վկա, մի երրորդ անձ։ Բոլոր պատմվածքները զրի են առ-նելով առաջին դեմքով, ինչպես որքերը պատմում էին, միայն «փոխանակ բաղմաթիվ բար-բառների, որոնք շատ անգամ խորթ են մեր ականջին,—նկատում է Միքայելյանը,—ու ան-հասկանալի ընթերցողների լայն շրջանների համար և որոնց ճիշտ վերարտադրությունը ան-հնար է մեր այբուբենով», զորողի կողմից վերածվել են «մատչելի ուսուսուցիչ բարբառի»։

«Եվ երբ այդ եղանակով,—և զրափակում է Կ. Միքայելյանը,—հավաքեցի մի քանի տաս-նյակ պատմվածքներ, իսկին ասած՝ կենսագրություններ ու ասպ կողք-կողքի զրի, իմ առաջ պատկերացավ երկրի բովանդակ նկարագիրը, տաճկահայի վիշտն ու կորուստը, նրա ավերված տունն ու հայրենիքը, կամ ուրիշ խոսքով ամբողջ Հողտուված Հայաստանը»⁷։

Բնագրի վրա զորողի ձեռքով մակագրված է. «Պատրաստի նյութեր։ Թող լույս տեսնի մի օր այս գիրքը»։ Ցավոք սրտի, այդպիսի գիրք լույս չտեսավ՝ հրապարակված են միայն մի

2 ԳԱԹ, Կ. Միքայելյանի ֆ., № 21, նաև՝ «Գործ», 1916, № 2։

3 «Լրագրեր հասարակական գիտությունների», 1981, № 2, էջ 91։

4 ԳԱԹ, Կ. Միքայելյանի ֆ., № 21, նաև՝ «Գործ», 1916, № 2։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում։

քանի պատմվածքներ նշված լրագրում: Մինչդեռ բնագրերում են մնացել բազմաթիվ որբերի պատմածները՝ Լորո Միսակի, Շըլըմ-Խորենց Հայկազի, Կյունց Հովհաննեսի, Գուրու, Ղուկասի, Գյուլիզարի և այլոց: Հատկանշական է, որ այդ որբերի թվում են եղել նաև Միքայելյանի կողմից «Հայտնաբերված» ապագա անվանի գրողներ և բանաստեղծներ Նաիրի Գարյանը (Հայաստան եղիադարյան), Վաղարշակ Նորենցը (Երեցյան), Գուրդեն Մահարին (Աճևմյան) և ուրիշ տաղանդավոր մանուկներ:

Կ. Միքայելյանի ձեռնարկած գործը և տպագրված «Հոշոտված Հայաստան» կենսագրական պատմվածքների շարքը, որը իրական փաստերի հիման վրա ստեղծված աշխատանք էր, արժանացավ հայ ու Լվրոպական (մասնավորապես Ֆրանսահայ) ընթերցողների ուշադրությանը: Այսպես, Ջալալ Եսայանը 1916 թ. հունվարի 2-ին գրում էր Երվանդ Թադևոսյանին. «Կարեն Միքայելյանը իր աշխատությունները բերավ ինձ մոտ, որպեսզի ծանոթացնեմ լերին աստիճանի հետաքրքրական և հուզիչ գործ է, որ կատարած է. ինձի կարգաց քանի մը էջեր, որոնք առանց բացառության մեծ արժեք ունենին. ահա թե ինչ պետք էր մեզի և համոզված եմ, որ այն, ինչ որ քննարկ է ինքը... անհամեմատ ավելի կարևոր են և բուն նպատակին կրճատային, քան թե բոլոր հանձնախումբերու տարտամ և բազմաձայն արդյունքը»:

Ի դեպ, նաև Ջ. Եսայանի «Քաջալերմամբ» է, որ Կ. Միքայելյանը հանձնում է բնագիրը «Գործ» հանդեսին, ուր և 1917 թ. ընթացքում տպագրված են պատմվածքները: Նույն թվականի սեպտեմբերի 23-ին Եսայանը Բաքվից գրում է Կ. Միքայելյանին մի մանրամասն նամակ, ուր անդրադառնում է «Հոշոտված Հայաստանին»՝ բարձր գնահատելով այն և մտահոգված նրա ճակատագրով. «Կուղեի գիտնալ, պարոն Միքայելյան, թե ինչու «Գործի» մեջ չի շարունակեցիք հրատարակությունը «Հոշոտված Հայաստանի». ի՞նչ մտադիր էք ընել այդ աշխատությունը, որը հավատարմացած եմ, որ ոչ միայն այսօր, այլ միշտ, մեծ արժեք պիտի ներկայացնե իբր ամենևն հուզիչ գործերեն մեկը մեր ժամանակակից դժբախտ կյանքին... Դուք այդ դժվարին աշխատությունը կատարած եք արվեստով ու ճաշակով և շատ մեղք է, որ այսօրան երկար ատեն ամբողջությունը հրատարակված չլլա: Արդյոք դիտավորություն ունիք առանձին հատորով հրատարակելու. կը խնդրեմ, որ այդ մասին ինձ տեղեկություն տաք շուտով»:

Նույն նամակում Ջ. Եսայանը տեղեկացնում է, որ «Հոշոտված Հայաստանից» թարգմանել է մի քանի դրվագ ֆրանսիական մամուլում տպագրելու համար, ինչպես նաև ֆրանսիացի հրապարակախոս և լրագրող Հանրի Բարբիի նղենի մասին գրած նյութերը: Վերջինս Փարիզյան «Le Journal illustration» թերթի սեփական թղթակիցն էր Ռուսաստանում, 1917 թ. գտնվում էր Բաքվում: Նա Ջ. Եսայանի հետ նյութեր ու փաստեր էր հավաքում հայոց մեծ ողբերգության մասին և դրանք թարգմանաբար տպագրում Փարիզի ֆրանսիական թերթերում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Հանրի Բարբին այցելել է Արևմտյան Հայաստան, ականատես եղել մեծ ոճրի զարհուրելի հետևանքներին և անհերքելի փաստերի հիման վրա գրել «Սարսափի երկրում. նահատակ Հայաստան» գիրքը:

Որ աշխատանքի մասին Եսայանը գրում է. «Ես այս միջոցին զբաղված եմ ի միջի այլոց թարգմանություններ ընելու Henri Barby-ին, որ Le Journal illustration Բարիզյան թերթերում մասնավոր թղթակիցն է Ռուսիո մեջ: Գիտեք, անշուշտ, որ հիշյալ պարոնը արդեն իսկ գիրք մը հրատարակած է հայոց մասին և մեծ հաջողություն գտած է. այսօր թարգմանեցի իրեն Ձեր «Հոշոտված Հայաստան»-ն «Նախշուն»-ը. մեծ հետաքրքրություն հառաջ բերավ այդ հոդվածը և պարոն Barby-ն նույնպես հաստատեց, որ ամենևն հուզիչ էջերեն մեկն է, որ ցարդ թարգմանած ենք: Այս առթիվ Ձեզ կարդ մը տեղեկություններ տալ պարտական կը համարեմ և հույս ունեմ, թե դեմ չեք ըլլար այն փոքր փոփոխություններու համար, որ ստիպված եղանք ընել թարգմանության միջոցին. «Հոշոտված Հայաստան» տիտղոսը ֆրանսերենի մեջ նույն ուժը չէր պահեր, այնպես, որ նախամեծար համարեցինք զնե՝ «Երեխաները կը լվայեն»: Ասկե զատ՝ Ձեր հառաջաբանին կրճատեցի այն հատվածը, ուր կսեք, թե պատմությունը գրած եք ռուսահայ բարբառով. այդ մասը ոչ միայն ավելորդ էր ֆրանսերենի մեջ, այլ նաև կրնար չփոթություն հառաջ բերել: Այս բաներեն դուրս մնացյալը թարգմանեցի բա-

8 Գրական ժառանգություն, № 12, 2 ապրիլ Եսայան. Նամակներ. Երևան, 1977,
9 Նույն տեղում, էջ 143:

ռաջի կերպով: ԵՔԼ Ձևը ընտրած տիտղոսի մասին կը պնդե՝ կարող էմ դնել զայն իբր Լրկ-
րորդ տիտղոս»¹⁰:

Այնուհետև Ձ. Եսայանը հայտնում է. «...մեր գլխավոր նպատակն է տպավորություն հա-
ռաչ րերել Ֆրանսիական ընթերցող հասարակության վրա... գրությունը պետք է հրատարակվի
„lecture pour tous“ (սխալ ընթերցանություն բոլորի համար»՝ Փարիզում այդ թվականներին
մեծ տպաքանակով լույս տեսնող հանգես—(Ի. Բ.) պատկերազարդ պարբերականին մեջ, որ
աշխարհիս ամեն կողմը տարածված թերթ է»¹¹:

Նույն նամակում Եսայանը գրում է. «Դիտավորություն չունի՞ր կրկին Կովկաս գալու, միշտ
է որ կյանքը բավական ձանձրացուցիչ է այստեղ և մեր միակ զվարճությունը այն մտահո-
գություններն են, որ մեզ Լրկման կղերականներն ու նաև հայկական ժողովները, որոնք իսկապես
զվարճալի են: Բարեբախտաբար մեզ նման մարդոց համար, հակառակ ամեն բանի, կան
հոգով այդ թաքուն անկյունները, ուր կարող ենք ապաստանել: Կը հիշե՞ք Երբեմն այն գիշե-
րային պտույտը, որ ըրինք Վահան Տերյանին հետ, զեղեցիկ հիշատակ մնացած է ասկե ինձ
համար»¹² (խոսքը նրանց 1916 թ. մոսկովյան հանդիպման մասին է, որ Եսայանը Հայկա-
կան կոմիտեի հրավերով զեկուցումներ էր կարգում արևմտահայ գրականության և հայկական
կոտորածների մասին—Ի. Բ.):

Ինչպես տեսնում ենք, ազգասիրական գործունեությունը հոգևորապես էր Լրկու հայ
առանձնաշնորհալիներին՝ Ձ. Եսայանին և Կ. Միքայելյանին: Նկատենք, որ այդ տարիներին
Կարեն Միքայելյանին դրաղեցնում էր նաև ուսերեն լեզվով պատրաստվող «Позняя Ар-
мения» անթոլոգիան հայտնի բանաստեղծ Վ. Բրյուսովի խմբագրությամբ: Հայ գրագետի դերը
այդ ժողովածուի ստեղծման գործում (անթոլոգիան լույս տեսավ 1916 թ. օգոստոսին) բավա-
կանին մեծ է՝ հենց Միքայելյանն էր գործի նախաձեռնողը¹³:

Այսպիսով, գրողի գրական-հասարակական ուղին շաղախվում էր միշտ ազգասիրական
գործունեությամբ՝ հանուն Հայաստանի, հայ ժողովրդի, նրա մշակույթի և ողբերգական պատ-
մական ուղու լուսարանման:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում, էջ 144:

¹² Նույն տեղում:

¹³ Տե՛ս Բ. Բագդասարյան. Карен Микаэлян и русско-армянские литературные
взаимосвязи.—Литературная Армения, 1994, № 9, с. 178—183.